

Քաղաքացիական Ծառայության Պաշտոնի Անձնագիր

27-34.4-U2-22 Գլխավոր մասնագետ(2024-03-01)

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Պաշտոնի Անվանում, Ծածկագիր

Ներքին գործերի նախարարություն | Ֆինանսարյուջետային վարչություն | Հաշվարկային բաժին |
Գլխավոր մասնագետ, (27-34.4-U2-22)

1.2 Ենթակա և հաշվետու է

Գլխավոր մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

1.3 Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Գլխավոր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի գլխավոր մասնագետը
կամ Բաժնի ավագ մասնագետը:

1.4 Աշխատավայր

Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Դավթաշեն վարչական շրջան, Դավթաշեն 4-րդ թաղ.,
17/10:

2. Պաշտոնի բնութագիր

2.1 Աշխատանքի բնույթը (գործառույթներ), Իրավունքները, Պարտականությունները

- իրականացնում է Նախարարության և նրան ենթակա պետական մարմինների ծառայողների (աշխատողների) աշխատավարձի անհատական քարտերի թղթային և/կամ էլեկտրոնային եղանակով, այդ թվում՝ դերիտորական և կրեդիտորական պարտքերի անալիտիկ հաշվառման վարման աշխատանքները.
- իրականացնում է Նախարարության և նրան ենթակա պետական մարմինների ծառայողների (աշխատողների) տվյալների էլեկտրոնային եղանակով մուտքագրումը, գրանցումը, աշխատավարձի, պարզևատրումների, այլ վճարումների տեղեկագրերի կազմումը, անհատական հաշվարկային թերթիկների (դրամական օգնություններ, անաշխատունակության նպաստներ, արձակուրդային վճարներ, կադրերի ռեզերվում գտնվող ծառայողների աշխատավարձ և այլն) հիմքով վճարացուցաների պատրաստումը և աշխատավարձի, պարզևատրումների, այլ վճարումների հաշվարկների տրամադրումը համապատասխան բաժնին՝ վճարման համար.
- իրականացնում է Նախարարության և նրան ենթակա պետական մարմինների ծառայողների (աշխատողների) տցիալական փաթեթի գումարների հաշվարկումը, վճարացուցաների պատրաստումը և վճարումների գրանցումը.
- իրականացնում է հաշվարկների անալիտիկ հաշվառումը, այդ հաշվարկների շարժի և մնացորդների ամփոփման և մեմորյալ օրդերների կազմումը.
- իրականացնում է Նախարարության, նրան ենթակա պետական մարմինների կառուցվածքային ստորաբաժանումների կողմից ներկայացված «Աշխատողների աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրերի» հաշվառումը.
- իրականացնում է Նախարարության և նրան ենթակա պետական մարմինների ծառայողներին (աշխատողներին)` աշխատավարձի չափի վերաբերյալ տեղեկանքների կազմումը.
- իրականացնում է եկամտային հարկի և տցիալական վճարի ամսական ամփոփ հաշվետվության հարկային մարմնին ներկայացնելու աշխատանքները.
- իրականացնում է Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունից ստացված որոշումների հիման վրա Նախարարության քաղաքական, հայեցողական պաշտոններ գրադեգույղ անձանց, Նախարարության կառուցվածքային ստորաբաժանումների և Նախարարությանը ենթակա պետական մարմինների ծառայողների (աշխատողների) աշխատավարձից պահպան գումարների հաշվարկման գործընթացը.

Իրավունքները.

- պահանջել և ստանալ տեղեկատվություն՝ Նախարարության և նրան ենթակա պետական մարմինների ծառայողների (աշխատողների) աշխատավարձի անհատական քարտերի թղթային և/կամ էլեկտրոնային եղանակով, այդ թվում՝ դերիտորական և կրեդիտորական պարտքերի անալիտիկ հաշվառման վարման համար.
- պահանջել և ստանալ տեղեկատվություն՝ անհատական հաշվարկային թերթիկների հիմքով վճարացուցակներ պատրաստելու համար.
- Նախարարության համապատասխան ստորաբաժանումներից ստանալ հիմնավորումներ, փաստաթղթեր և հրամաններ.
- պահանջել և ստանալ տեղեկատվություն՝ աշխատողների տվյալները էլեկտրոնային եղանակով մուտքագրելու, գրանցելու, աշխատավարձի, պարզեցնելու համար և այլ վճարումների տեղեկագրեր կազմելու համար.
- ստանալ Նախարարության և նրան ենթակա պետական մարմինների սոցփաթեթի շահառուների տվյալները՝ ամենամյա գումարները հաշվարկելու նպատակով.
- պահանջել և ստանալ Նախարարության և նրան ենթակա պետական մարմիններից անհրաժեշտ տեղեկանքներ, տեղեկատվություն, հիմնավորումներ, «Աշխատողների աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրեր» և այլ փաստաթղթեր.
- համապատասխան ստորաբաժանումներից ստանալ գործուղումների հետ կապված վճարման ենթակա փաստաթղթերը.
- ուսումնասիրել համապատասխան մարմիններց և կազմակերպություններց օրենսդրությամբ սահմնաված ստացված անհրաժեշտ տեղեկատվությունը.

Պարտականությունները.

- վարել Նախարարության և նրան ենթակա պետական մարմինների ծառայողների (աշխատողների) աշխատավարձի անհատական քարտերը, դերիտորական և կրեդիտորական պարտքերի անալիտիկ հաշվառման աշխատանքները.
- հաշվարկել Նախարարության և նրան ենթակա պետական մարմինների ծառայողների (աշխատողների) աշխատավարձները, դրամական օգնությունները, անաշխատունակության նպաստները, արձակուրդային վճարները, կաղըերի ռեզերվում գտնվող ծառայողների աշխատավարձները և այլ վճարումները.
- հաշվարկել Նախարարության և նրան ենթակա պետական մարմինների սոցփաթեթի շահառուների սոցփաթեթի ամենամյա գումարները.
- կատարել վճարումների հաշվարկներն ներկայացնելու համապատասխան բաժնին վճարման գործներացն իրականցնելու նպատակով.
- տրամադրել Նախարարության և նրան ենթակա պետական մարմինների ծառայողներին (աշխատողներին)՝ աշխատավարձի չափի վերաբերյալ տեղեկանքները.
- պատրաստել գրության նախագծեր՝ ի պատասխան քաղաքացիներից (նախկին աշխատակիցների աշխատավարձերի տեղեկանքների տրամադրում) և այլ գերատեսչություններից ստացված նամակների.
- ամփոփել և Բաժնի պետին ներկայացնել հաշվարկների շարժն ու կազմված մեմորյալ օրենքները.
- Բաժնի պետին ներկայացնել եկամտային հարկի և սոցիալական վճարի վերաբերյալ ամսական ամփոփ հաշվետվությունը.
- կազմել և Բաժնի պետին ներկայացնել եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական ամփոփ հաշվետվությունը՝ հարկային մարմին ներկայացնելու համար.
- հաշվարկել և հաշվարել Նախարարության քաղաքական, հայեցողական պաշտոններ գրադեգնող անձանց, Նախարարության կառուցվածքային ստորաբաժանումների և Նախարարությանը ենթակա պետական մարմինների ծառայողների (աշխատողների) աշխատավարձից պահպող գումարները.
- նախապատրաստել առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, գեկուցագրեր և այլ գրություններ.
- համագործակցել համապատասխան տարածքային ստորաբաժանման ղեկավարի հետ:

3 Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1 Կրթություն, որակավորման աստիճանը

1.	Ուղղություն	Սոցիալական գիտություններ, լրագրություն	Գործարարություն, վարչարան և տեղեկատվություն և իրավունք վական գիտություններ Սոցիալական	Բնական գիտություններ, մաթեմատիկա և վիճակագրություն
2.	Ոլորտ	և վարքաբանական գիտություններ	Գործարարություն և վարչարարություն և կառավագական	Մաթեմատիկա և վիճակագրություն
3.	Ենթաղղություն	Հաշվապահություն և հարկային գործ	Կառավագական հում և վար չարարություն Ֆինանսներ հարկային գործ	Վիճակագրություններ տային մասնակիություն և վիճակագրություններ
4.	Գիտություն	Մասնակիություն	Ֆինանսական մաթեմատիկա	Մասնակիություն

3.2 Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:

3.3 Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ ֆինանսավարկային կամ տնտեսագիտության բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:

3.4 Անհրաժեշտ կոմպետենցիաներ

- ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ
 - Խնդրի լուծում
 - Հաշվետվությունների մշակում
 - Բարեկարրություն
 - Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
 - Ծրագրերի մշակում
- ԸՆՏՐԱՆՁԱՅԻՆ
 - Փոփոխությունների կառավարում
 - Ժամանակի կառավարում
 - Փաստաթղթերի նախապատրաստում
 - Ֆինանսների և ռեսուրսների կառավարում

4 Կազմակերպական շրջանակ

4.1 Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության անմիջական արդյունքի համար:

4.2 Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումների աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորված մասնագիտական եզրակացությունների տրամադրման և դիմումների քննարկման արդյունքում որոշումների նախապատրաստման և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում որոշումների կայացման շրջանակներում:

4.3 Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման համար մասնագիտական գործունեության գերատեսչական ազդեցություն:

4.4 Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասությունների շրջանակներում շփում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի ներսում այլ կառուցվածքային ստորաբաժանումների, այլ մարմինների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ ձևավորված աշխատանքային խմբերում:

4.5 Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: